ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Համագործակցության պետությունների ընդհանուր շահերի ոլորտում գործունեության համակարգման հետ կապված հարցերի լուծման համար ստեղծել Համագործակցության բարձրագույն մարմին՝ Պետությունների ղեկավարների խորհուրդ, ինչպես նաեւ Կառավարությունների ղեկավարների խորհուրդ:

2. Հանձնարարել Համագործակցության պետությունների լիազոր ներկայացուցիչներին, մինչեւ 1991 թվականի դեկտեմբերի 30-ը, Պետությունների ղեկավարների խորհրդի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ նախկին ԽՍՀ Միության կառույցների վերացման մասին, ինչպես նաեւ Համագործակցության համակարգող ինստիտուտների մասին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 21-ից: